ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ապրիլի 2023 թվականի №---Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐՔԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2023 թվականի մարտի 22-ի №Ե-348-23 և ապրիլի 7-ի №04-ԿՀ-09/663 գրություններով դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով համաձայնություն տալ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Բուռնազյան փողոցի 37/3 հասցեում գտնվող անշարժ գույքի (հողամաս և շինություն)՝ Ավետ Մադոյանին պատկանող՝ նույն համայնքի Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Բուռնազյան փողոցի 37/6 հասցեում գտնվող անշարժ գույքի (հողամաս և շինություն) հետ փոխանակության գործարքի (այսուհետ՝ Գործարք) կնքմանը,

բ) Հանձնաժողովի կողմից Գործարքին համաձայնություն տալը, «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, չի խախտում էներգետիկ համակարգի հուսալիությունը, անվտանգությունը և ներքին շուկայի սպառողների շահերը, Ընկերության ներկայացրած փաստաթղթերը և տեղեկատվությունը համապատասխանում են Հանձնաժողովի սահմանած կարգի պահանջներին, իսկ անհրաժեշտ փորձ ունենալու վերաբերյալ դրույթը Գործարքի նկատմամբ կիրառելի չէ, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39-Ն որոշմամբ հաստատված կարգը, Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Բուռնազյան փողոցի 37/3 հասցեում գտնվող անշարժ գույքի (հողամաս և շինություն)՝ Ավետ Մադոյանին պատկանող՝ նույն համայնքի Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Բուռնազյան փողոցի 37/6 հասցեում գտնվող անշարժ գույքի (հողամաս և շինություն) հետ փոխանակության գործարքի (այսուհետ՝ Գործարք) կնքմանը:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքը կարող է կնքվել որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ

1) սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում անհրաժեշտ է Հանձնաժողով ներկայացնել համապատասխան պայմանագրի պատճենը:
2) Գործարքի առարկա հանդիսացող գույքերի փոխանակության արդյունքում այդ գույքերի շուկայական արժեքների տարբերությունից առաջացած օգուտը նվազեցվելու է սակագների վերանայման ժամանակ Ընկերությունից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի հաշվարկից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- ապրիլի 2023թ.